ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-417-27.10.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 62-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին պարբերության վերջին նախադասությունը հանել և նույն մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երրորդ պարբերություն.

«Սույն մասի առաջին պարբերության դրույթները չեն կիրառվում՝

1) եթե սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված գույքային միավորների օտարման գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով),

2) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված այնպիսի գույքային միավորների օտարման գործարքների դեպքում, որոնց նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության գրավի իրավունքը գրանցվել է մինչև «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելը, և այդ գույքը բանկին կամ վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցվել է հարկադիր կամ սնանկության աճուրդում գնման արդյունքում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «ժդ.» ենթակետում «լիզինգային պայմանագրի» բառերից առաջ լրացնել «լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ամսաթվի դրությամբ ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 26-րդ կետ.

«26) շահութահարկ վճարողի՝ այլ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների օտարումից ստացվող եկամուտները, եթե բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի օտարումը կատարվում է բաժնետոմսը, բաժնեմասը կամ փայաբաժինը ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվան հաջորդող երկու հարկային տարիները լրանալուց հետո:»:

Հոդված 4. Օրենսգրքի 109-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետի ա. և բ. ենթակետերի երկրորդ պարբերություններից հանել «, և շենքի վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) տարբերակումը կատարվում է դրա կադաստրային արժեքից ելնելով» բառերը,

2) 1-ին մասի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասի դրույթները չեն կիրառվում՝

1) եթե սույն մասով սահմանված գույքային միավորների օտարման կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով),

2) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից սույն մասով սահմանված այնպիսի գույքային միավորների օտարման գործարքների դեպքում, որոնց նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության գրավի իրավունքը գրանցվել է մինչև «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելը, և այդ գույքը բանկին կամ վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցվել է հարկադիր կամ սնանկության աճուրդում գնման արդյունքում,

3) եթե բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցած (այդ թվում՝ պարտքի դիմաց ստացված)՝ սույն մասով սահմանված՝ գրավ դրված գույքային միավորները բանկի կամ վարկային կազմակերպության կողմից այդ գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, օտարվում են այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել էր բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին,

4) լիզինգի (տարատեսակների) պայմանագրի շրջանակներում լիզինգատուի կողմից լիզինգառուին սույն մասով սահմանված գույքային միավորների օտարման գործարքների նկատմամբ,

5) Կառավարության որոշումների հիման վրա սույն մասով սահմանված գույքային միավորների օտարման կամ վարձակալության հանձնման գործարքների նկատմամբ:»,

3) 1-ին մասից հետո լրացնել 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հարկադիր կամ սնանկության աճուրդում գնման արդյունքում բանկին կամ վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցված՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գույքային միավորների օտարումից եկամուտը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով գործարքի փաստացի գինը (առանց՝ ԱԱՀ-ի), բայց ոչ պակաս, քան հարկադիր կամ սնանկության աճուրդում այդ գույքի ձեռք բերման գինը (առանց՝ ԱԱՀ-ի): Սույն մասով սահմանված կարգավորումները կիրառվում են միայն այն գույքային միավորների օտարման գործարքների մասով, որոնց նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության գրավի իրավունքը գրանցվել է մինչև «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելը:»:

Հոդված 5. Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-րդ կետ.

«20) շահութահարկ վճարողի՝ այլ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների հաշվեկշռային արժեքները, եթե բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի օտարումը կատարվում է բաժնետոմսը, բաժնեմասը կամ փայաբաժինը ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվան հաջորդող երկու հարկային տարիները լրանալուց հետո:»:

Հոդված 6. Օրենսգրքի 121-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի առաջին պարբերության 1-ին կետի բ. և գ. ենթակետերում «սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով» բառերից հետո լրացնել «կամ 2-րդ մասով» բառերը,

2) 3-րդ մասի երկրորդ պարբերության՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվի վրա կատարված ծախսերը՝ որպես կապիտալ կամ ընթացիկ բնույթի ծախսեր, դասակարգելու համար գործառնական վարձակալությամբ կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքներ են ընդունվում վարձատուի կամ լիզինգատուի կամ անհատույց օգտագործման տրամադրողի (բացառությամբ, եթե վարձատու կամ լիզինգատու կամ անհատույց օգտագործման տրամադրող է հադիսանում անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձը կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը) մոտ հաշվառված՝ համապատասխանաբար սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքները, որոնք նշվում են համապատասխան ակտում կամ պայմանագրում կամ հանձնման-ընդունման փաստաթղթում: Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձից կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից գործառնական վարձակալությամբ կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական և հաշվեկշռային արժեքները որոշվում են տվյալ գույքի ձեռք բերման փաստաթղթերում նշված ձեռք բերման արժեքի չափով:

Սույն կետով սահմանված փաստաթղթերում սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքների բացակայության դեպքում՝

ա. այդ արժեքները համարվում են զրո, բացառությամբ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործման վերցնելու գործարքների դեպքերի,

բ. շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհա-

տույց օգտագործման վերցնելու գործարքների դեպքերում սկզբնական արժեքները և հաշվեկշռային արժեքները որոշվում են Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսի չափով.»,

բ. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) գործառնական վարձակալությամբ կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացնելու համար որպես ամորտիզացիոն նվազագույն ժամկետ է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կամ 2-րդ մասով սահմանված ժամկետը, իսկ որպես մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատված է ընդունվում վարձատուի կամ լիզինգատուի կամ անհատույց օգտագործման տրամադրողի (բացառությամբ, եթե վարձատու կամ լիզինգատու կամ անհատույց օգտագործման տրամադրող է հադիսանում անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձը կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը) մոտ հաշվառված մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածը, որոնք նշվում են համապատասխան ակտում կամ պայմանագրում կամ հանձնման-ընդունման փաստաթղթում: Դրանցում մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածի բացակայության դեպքում որպես մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատված է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կամ 2-րդ մասով սահմանված ժամկետը:

Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձից կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից գործառնական վարձակալությամբ կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացնելու համար որպես ամորտիզացիոն նվազագույն և մնացորդային ժամանակահատված է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կամ 2-րդ մասով սահմանված ժամկետը.»,

3) 5-րդ մասի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությամբ սահմանված դեպքերում:»:

Հոդված 7. Օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետում «զրո տոկոս» բառերից հետո լրացնել «, իսկ այլ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով՝ 18 տոկոս» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 146-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում և 3-րդ մասի 1-ին կետում «վեց ամսվա» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով,

2) 3-րդ մասի 2-րդ կետում և 4-րդ մասում «վեցամսյա» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 42-րդ կետ.

«42) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի օտարումից բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող եկամուտները, եթե հետագայում այդ գույքը նույն բանկի կամ վարկային կազմակերպության կողմից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց տրամադրվում է լիզինգով (տարատեսակներով):»:

Հոդված 10. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «մայիսի 1-ը» բառերով:

Հոդված 11.Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-5-րդ մասերով սահմանված հոդվածների:

2. Սույն օրենքի 1-ին, 4-րդ և 6-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հանձնման-ընդունման ակտով հանձնվող լիզինգի առարկայի մասով:

4. Սույն օրենքի 7-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

5. Սույն օրենքի 9-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է դրանից հետո կատարվող՝ գույքի օտարման գործարքների դիմաց բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող եկամուտների մասով:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ-ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

(Կ-417-27.10.2022-ՏՀ-011/1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 12. ~~Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 62-րդ հոդվածի՝~~

~~**Հոդված 1.** 6-րդ մասում «7-րդ մասով» բառերից հետո լրացնել «և 8-րդ մասի երրորդ պարբերությամբ» բառերը,~~

~~**Հոդված 2.** 8-րդ մասի առաջին պարբերության վերջին նախադասությունը հանել և նույն մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.~~

~~«Սույն մասի առաջին պարբերության դրույթները չեն կիրառվում՝~~

~~1) եթե սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված գույքային միավորների օտարման գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով),~~

~~2) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված այնպիսի գույքային միավորների օտարման գործարքների դեպքում, որոնց նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության գրավի իրավունքը գրանցվել է մինչև «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելը, և այդ գույքը բանկին կամ վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցվել է հարկադիր կամ սնանկության աճուրդում գնման արդյունքում:»:~~

2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 62-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին պարբերության վերջին նախադասությունը հանել և նույն մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երրորդ պարբերություն.

«Սույն մասի առաջին պարբերության դրույթները չեն կիրառվում՝

3) եթե սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված գույքային միավորների օտարման գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով),

4) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված այնպիսի գույքային միավորների օտարման գործարքների դեպքում, որոնց նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության գրավի իրավունքը գրանցվել է մինչև «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելը, և այդ գույքը բանկին կամ վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցվել է հարկադիր կամ սնանկության աճուրդում գնման արդյունքում:»:

Հոդված 13. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «ժդ.» ենթակետում «լիզինգային պայմանագրի» բառերից առաջ լրացնել «լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ամսաթվի դրությամբ ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին» բառերը:

Հոդված 14. Օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 26-րդ կետ.

«26) շահութահարկ վճարողի՝ այլ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների օտարումից ստացվող եկամուտները, եթե բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի օտարումը կատարվում է բաժնետոմսը, բաժնեմասը կամ փայաբաժինը ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվան հաջորդող ~~երեք~~ երկու հարկային տարիները լրանալուց հետո:»:

Հոդված 15.Օրենսգրքի 109-րդ հոդվածի՝

~~4)~~1) 1-ին մասի 2-րդ կետի ա. և բ. ենթակետերի երկրորդ պարբերություններից հանել «, և շենքի վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) տարբերակումը կատարվում է դրա կադաստրային արժեքից ելնելով» բառերը,

~~5)~~2) 1-ին մասի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասի դրույթները չեն կիրառվում՝

6) եթե սույն մասով սահմանված գույքային միավորների օտարման կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով),

7) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից սույն մասով սահմանված այնպիսի գույքային միավորների օտարման գործարքների դեպքում, որոնց նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության գրավի իրավունքը գրանցվել է մինչև «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելը, և այդ գույքը բանկին կամ վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցվել է հարկադիր կամ սնանկության աճուրդում գնման արդյունքում,

8) եթե բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցած (այդ թվում՝ պարտքի դիմաց ստացված)՝ սույն մասով սահմանված՝ գրավ դրված գույքային միավորները բանկի կամ վարկային կազմակերպության կողմից այդ գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, օտարվում են այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել էր բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին,

9) լիզինգի (տարատեսակների) պայմանագրի շրջանակներում լիզինգատուի կողմից լիզինգառուին սույն մասով սահմանված գույքային միավորների օտարման գործարքների նկատմամբ,

10)Կառավարության որոշումների հիման վրա սույն մասով սահմանված գույքային միավորների օտարման կամ վարձակալության հանձնման գործարքների նկատմամբ:»,

~~6)~~3)1-ին մասից հետո լրացնել 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հարկադիր կամ սնանկության աճուրդում գնման արդյունքում բանկին կամ վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցված՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գույքային միավորների օտարումից եկամուտը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով

գործարքի փաստացի գինը (առանց՝ ԱԱՀ-ի), բայց ոչ պակաս, քան հարկադիր կամ սնանկության աճուրդում այդ գույքի ձեռք բերման գինը (առանց՝ ԱԱՀ-ի): Սույն մասով սահմանված կարգավորումները կիրառվում են միայն այն գույքային միավորների օտարման գործարքների մասով, որոնց նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության գրավի իրավունքը գրանցվել է մինչև «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելը:»:

Հոդված 16.Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-րդ կետ.

«20) շահութահարկ վճարողի՝ այլ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների հաշվեկշռային արժեքները, եթե բաժնետոմսի, բաժնեմասի կամ փայաբաժնի օտարումը կատարվում է բաժնետոմսը, բաժնեմասը կամ փայաբաժինը ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվան հաջորդող ~~երեք~~ երկու հարկային տարիները լրանալուց հետո:»:

Հոդված 17.Օրենսգրքի 121-րդ հոդվածի՝

~~4)~~1)3-րդ մասի առաջին պարբերության 1-ին կետի բ. և գ. ենթակետերում «սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով» բառերից հետո լրացնել «կամ 2-րդ մասով» բառերը,

~~5)~~2)3-րդ մասի երկրորդ պարբերության՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվի վրա կատարված ծախսերը՝ որպես կապիտալ կամ ընթացիկ բնույթի ծախսեր, դասակարգելու համար գործառնական վարձակալությամբ կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքներ են ընդունվում վարձատուի կամ լիզինգատուի կամ անհատույց օգտագործման տրամադրողի (բացառությամբ, եթե վարձատու կամ լիզինգատու կամ անհատույց օգտագործման տրամադրող է հադիսանում անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձը կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը) մոտ հաշվառված՝ համապատասխանաբար սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքները, որոնք նշվում են համապատասխան ակտում կամ պայմանագրում կամ

հանձնման-ընդունման փաստաթղթում: Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձից կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից գործառնական վարձակալությամբ կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական և հաշվեկշռային արժեքները որոշվում են տվյալ գույքի ձեռք բերման փաստաթղթերում նշված ձեռք բերման արժեքի չափով:

~~Սույն կետով սահմանված փաստաթղթերում սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքների բացակայության դեպքում (բացառությամբ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործման վերցնելու գործարքների դեպքերի) այդ արժեքները համարվում են զրո, իսկ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործման վերցնելու գործարքների դեպքերում սկզբնական արժեքները և հաշվեկշռային արժեքները որոշվում են Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսի չափով.»,~~

Սույն կետով սահմանված փաստաթղթերում սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքների բացակայության դեպքում՝

ա. այդ արժեքները համարվում են զրո, բացառությամբ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործման վերցնելու գործարքների դեպքերի,

բ. շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործման վերցնելու գործարքների դեպքերում սկզբնական արժեքները և հաշվեկշռային արժեքները որոշվում են Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսի չափով.»,

բ. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) գործառնական վարձակալությամբ կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացնելու համար որպես ամորտիզացիոն նվազագույն

ժամկետ է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կամ 2-րդ մասով սահմանված ժամկետը, իսկ որպես մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատված է ընդունվում վարձատուի կամ լիզինգատուի կամ անհատույց օգտագործման տրամադրողի (բացառությամբ, եթե վարձատու կամ լիզինգատու կամ անհատույց օգտագործման տրամադրող է հադիսանում անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձը կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը) մոտ հաշվառված մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածը, որոնք նշվում են համապատասխան ակտում կամ պայմանագրում կամ հանձնման-ընդունման փաստաթղթում: Դրանցում մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածի բացակայության դեպքում որպես մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատված է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կամ 2-րդ մասով սահմանված ժամկետը:

Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձից կամ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունից գործառնական վարձակալությամբ կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացնելու համար որպես ամորտիզացիոն նվազագույն և մնացորդային ժամանակահատված է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կամ 2-րդ մասով սահմանված ժամկետը.»,

~~6)~~3)5-րդ մասի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում Օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությամբ սահմանված դեպքերում:»:

Հոդված 18.Օրենսգրքի 125-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետում «զրո տոկոս» բառերից հետո լրացնել «, իսկ այլ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով՝ 18 տոկոս» բառերը:

Հոդված 19.Օրենսգրքի 146-րդ հոդվածի՝

~~3)~~1) 2-րդ մասում և 3-րդ մասի 1-ին կետում «վեց ամսվա» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով,

~~4)~~2) 3-րդ մասի 2-րդ կետում և 4-րդ մասում «վեցամսյա» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով:

Հոդված 20.Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 42-րդ կետ.

«42) սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի օտարումից բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող եկամուտները, եթե հետագայում այդ գույքը նույն բանկի կամ վարկային կազմակերպության կողմից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց տրամադրվում է լիզինգով (տարատեսակներով):»:

Հոդված 21. Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «մայիսի 1-ը» բառերով:

~~**Հոդված 21.**~~**Հոդված 22.Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

~~6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հոդվածների:~~

~~7. Սույն օրենքի 1-ին, 4-րդ և 6-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:~~

6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-5-րդ մասերով սահմանված հոդվածների:

7. Սույն օրենքի 1-ին, 4-րդ և 6-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

8. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հանձնման-ընդունման ակտով հանձնվող լիզինգի առարկայի մասով:

9. Սույն օրենքի 7-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

10.Սույն օրենքի 9-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է դրանից հետո կատարվող՝ գույքի օտարման գործարքների դիմաց բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող եկամուտների մասով:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-417-27.10.2022-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-417[1]-27.10.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ				
1.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 62-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին պարբերության վերջին նախադասությունը հանել և նույն մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երրորդ պարբերություն.	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Չի ընդունվել:

			«Սույն մասի առաջին պարբերության դրույթները չեն կիրառվում՝ 1) եթե սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված գույքային միավորների օտարման գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով), 2) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված այնպիսի գույքային միավորների օտարման գործարքների դեպքում, որոնց նկատմամբ բանկի կամ վարկային կազմակերպության գրավի իրավունքը գրանցվել է մինչև «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելը, և այդ գույքը բանկին կամ վարկային կազմակերպությանը սեփականության իրավունքով փոխանցվել է հարկադիր կամ		

			սնանկության աճուրդում գնման արդյունքում:»:		
2.	**ՀՀ կառավարություն**	**1-ին, 4-րդ, 6-րդ և 8-րդ հոդվածներ**	Առաջարկվում է վերանայել նախագծի 1-ին, 4-րդ, 6-րդ և 8-րդ հոդվածների համարակալումը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը, ըստ որի՝ հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Չի ընդունվել:
3.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում «ԱԱՀ վճարող համար-վող» բառերից առաջ լրացնել « լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ամսաթվի դրությամբ» բառերը՝ հաշվի առնելով այն, որ անհրաժեշտ է հստակեցնել, թե Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «ժդ.» ենթակետով սահմանված՝ ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության մասով, ապրանքների օտարման ժամանակ որ պահի դրությամբ ԱԱՀ վճարող համարվող տնտեսավարող սուբյեկտների մասին է խոսքը:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Չի ընդունվել:

4.	**ՀՀ կառավարություն**	**3-րդ և 5-րդ հոդվածներ**	Առաջարկվում է նախագծի 3-րդ և 5-րդ հոդվածներում «երեք» բառը փոխարինել «երկու» բառով:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Չի ընդունվել:
4.	**ՀՀ կառավարություն**	**6-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի ա. կետի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն կետով սահմանված փաստաթղթերում սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքների բացակայության դեպքում՝ ա. այդ արժեքները համարվում են զրո, բացառությամբ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործման վերցնելու գործարքների դեպքերի, բ. շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ լիզինգով (տարատեսակներով) կամ անհատույց օգտագործման վերցնելու գործարքների դեպքերում սկզբնական արժեքները և հաշվեկշռային արժեքները	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Չի ընդունվել:

			որոշվում են Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսի չափով.»:		
5.	**ՀՀ կառավարություն**	**Նոր 10-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծում լրացնել նոր 10-րդ հոդված հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 10.** Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «մայիսի 1-ը» բառերով:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Չի ընդունվել:
6.	**ՀՀ կառավարություն**	**10-րդ հոդված** (լրամշակված 11-րդ հոդված)	Առաջարկվում է նախագծի 10-րդ (լրամշակված 11-րդ հոդվածը) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ «**Հոդված 11. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-5-րդ մասերով սահմանված հոդվածների: 2. Սույն օրենքի 1-ին, 4-րդ և 6-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Չի ընդունվել:

			են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: 3. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հանձնման-ընդունման ակտով հանձնվող լիզինգի առարկայի մասով: 4. Սույն օրենքի 7-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից: 5. Սույն օրենքի 9-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է դրանից հետո կատարվող՝ գույքի օտարման գործարքների դիմաց բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող եկամուտների մասով:»:		
	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ				
1.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված** 1. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Չի ընդունվել:

			քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի՝ 1) 3-րդ մասի 1-ին կետում «6 ամսվա» բառերը փոխարինել «1 տարվա» բառերով, 2) 3-րդ մասի 2-րդ կետում, 4-րդ մասում «վեցամսյա» բառերը փոխարինել «1 տարվա» բառերով:»:		
2.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված** 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:»:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Չի ընդունվել: